



## **Կարգապահական գործ թիվ ԿԳ-19079**

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի  
2019 թվականի դեկտեմբերի 24-ի թիվ 355-րդ ԿԳ նիստի

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**  
**ԹԻՎ ԿԳ/209-Ա**

### **ՓԱՍՏԱՐԱՆ ՎԱՀԱԳՆ ԴԱՆԻԵԼՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության փաստաբանների խորհուրդը (**այսուհետ նաև՝ խորհուրդ**), նիստը նախագահող՝ Հրանտ Անանյանի, Խորհրդի անդամներ՝ Մելանյա Առուստամյանի, Սիմոն Բաբայանի, Գայանե Դեմիրջյանի, Տիգրան Խուրշուդյանի, Հարություն Հարությունյանի, Կարեն Մեծլումյանի և Կարեն Սարգսյանի կազմով,

քարտուղարությամբ՝ Մարիամ Պետրոսյանի,

քննության առնելով փաստաբան Վահագն Դանիելյանին (արտոնագիր թիվ 425) կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը,

### **Պ Ա Ր Զ Ե Ց՝**

#### **1. Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.**

Հրաչյա Հովսեփյանը (**այսուհետ նաև՝ Դիմող**) դիմելով Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատ (**այսուհետ՝ նաև Պալատ**) հայտնել է, որ 30.05.2014 թվականին դիմել է փաստաբան Վահագն Դանիելյանին և նրանից ստացել պատասխան, որ առաջին ատյանի դատարանում գործը կլուծվի իր օգտին: Այնուհետև՝ քանի որ գործի ընթացքում բացակայելու էր երկրից, իր շահերը ներկայացնելու համար փաստաբանի հետ կնքել է պայմանագիր և տվել լիազորագիր:

Դիմողը նշել է նաև, որ անցել են տարիներ և փաստաբանը գործը տանուլ է տվել, ինչը չի համապատասխանում իր նախնական ասածին, որ գործն առաջին ատյանի դատարանում կշահի, ինչն էլ իրեն տեղիք է տալիս ենթադրելու, որ փաստաբանը կրկնակի խաղ է խաղացել:

#### **2. Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.**

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի նախագահի 20.05.2019թ. թիվ 170-Ա/ԿԳ-19079 որոշմամբ փաստաբան Վահագն Դանիելյանի (արտոնագիր թիվ 425) նկատմամբ հարուցվել է կարգապահական վարույթ՝

**24 դեկտեմբերի, 2019թ.**  
**Թիվ ԿԳ/209-Ա**

«Փաստաբանության մասին» օրենքի (**այսուհետ՝ նաև Օրենք**) 19-րդ հոդվածի 2-րդ կետի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի ընդհանուր ժողովի կողմից 11.02.2012թ. թիվ 1/4-Լ որոշմամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի (**այսուհետ՝ Կանոնագրքի**) 3.1.10 ենթակետի խախտման հատկանիշներով.

23.05.2019թ. կարգապահական գործը հանձնվել է կարգապահական գործը նախապատրաստող անձ Արմեն Սիմոնյանին:

### **3. Դիմողի և Պատասխանողի համառոտ բացատրությունները, վկաների ցուցմունքները.**

#### **3.1. Դիմողի համառոտ բացատրությունը.**

Սույն կարգապահական գործի քննությանը Դիմողը ներկայացել է և ըստ էության վերահաստատել է դիմումում արտահայտված դիրքորոշումը:

#### **3.2. Պատասխանողի համառոտ բացատրությունը.**

Փաստաբան Վահագն Դանիելյանը նախապատրաստողին ներկայացրել է գրավոր բացատրություն, որտեղ նշել է, որ Դիմողը, դիմելով իրեն, ստացել է համապատասխան իրավաբանական խորհրդատվություն, որի հիման վրա կնքվել է փաստաբանական ծառայության մատուցման պայմանագիր և տրվել է լիազորագիր՝ վերջինիս շահերը դատարանում ներկայացնելու համար: 2014 թվականին իր կողմից հայցադիմում է կազմվել և ներկայացվել Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարան՝ ըստ հայցի Հրաչյա Հովսեփյանի ընդդեմ Վարուժան, Նունուֆար, Սոնա, Հռիփսիմե Նավասարդյանների, Մարիամ Հարությունյանի՝ ավտոտնակի առուվաճառքի պայմանագիրը վավեր ճանաչելու պահանջի մասին (գործի համարը՝ ԿԴ3/0586/02/14): Նշված կայացվել է վճիռ՝ Հրաչյա Հովսեփյանի հայցը մերժվել է: Այնուհետև, 2015 թվականին Հրաչյա Հովսեփյանը կրկին դիմել է իրեն մեկ այլ քաղաքացիական գործով՝ ըստ վերջինիս հայցի ընդդեմ Վարուժան, Նունուֆար, Սոնա, Հռիփսիմե Նավասարդյանների, Մարիամ Հարությունյանի, երրորդ անձ Ջովունու գյուղապետարանի՝ ինքնակամ կառույցները քանդելուն պարտավորեցնելու պահանջի մասին, որով կազմվել է համապատասխան հայցադիմում և ներկայացվել է Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարան (գործի համարը՝ ԿԴ3/0704/02/15): Նշված գործով ևս հայցը մերժվել է:

Փաստաբանը նշել է, որ դիմողի այն պատճառաբանությունը, որ ինքն իբր կրկնակի խաղ է խաղացել և իրեն խոստացել է, որ առաջին ատյանի դատարանում իր օգտին վճիռ կկայացվի, չի համապատասխանում իրականությանը: Բացի այդ, եթե Դիմողի հայցապահանջով առաջին ատյանի դատարանի վճիռը իբր չի համապատասխանել իր խոստացած բավարարված վճռին, ապա պետք է որ կորցնեք վստահությունը փաստաբանի նկատմամբ, այլ ոչ թե երկրորդ անգամ՝ այլ գործով ևս դիմեք իրեն: Հետևաբար, Դիմողի պատճառաբանությունն անհիմն է և սուտ:

Պատասխանողը թեև պատշաճ ծանուցվել է կարգապահական նիստի վայրի, օրվա և ժամի մասին, սակայն Խորհրդի նիստին չի ներկայացել:

### **3.3. Վկաների ցուցմունքները.**

Սույն կարգապահական գործով վկաներ չեն հրավիրվել:

### **4. Կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, եզրակացության վերաբերյալ առարկությունները և գործի հանձնումը Խորհրդին.**

22.07.2019թ. կարգապահական վարույթի գործը նախապատրաստող անձ Արմեն Սիմոնյանը կազմել է եզրակացություն, որում, ներկայացնելով գործով հաստատված հանգամանքները, նշել է, որ փաստաբանի վարքագծի խախտման վերաբերյալ վերջնական որոշումը կայացնելու է Պալատի Խորհուրդը:

23.07.2019թ. գործը հանձնվել է Խորհրդին:

Խորհրդի նիստերը տեղի են ունեցել 2019 թվականի սեպտեմբերի 17-ին, ժամը՝ 19:00-ին և 2019 թվականի դեկտեմբերի 24-ին, ժամը՝ 18:30-ին ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ք.Երևան, Զաքյան 2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակ):

### **5. Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.**

Պալատի ընդհանուր ժողովի կողմից 19.10.2019 թվականի թիվ 1-Լ որոշմամբ նոր խմբագրությամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի հավելվածը հանդիսացող «Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման» կարգի (**այսուհետ նաև՝ Կարգ**) 3.10.3 ենթակետի համաձայն՝ *Պալատի խորհուրդը հիմք է ընդունում Նախապատրաստողի եզրակացությամբ հաստատված փաստերը, բացառությամբ այն դեպքի, երբ գործում գտնվող ապացույցները կամ Պալատի խորհրդին ներկայացված լրացուցիչ ապացույցները՝ սույն կարգին համապատասխան գնահատելու արդյունքում Պալատի խորհուրդն այլ եզրահանգման է գալիս:*

***Խորհուրդը ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև Կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, հաստատված է համարում հետևյալ փաստերը՝***

1. Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանում քննվող թիվ ԿԴ-3/0586/02/14 և ԿԴ-3/0704/02/15 քաղաքացիական գործերի շրջանակներում Պատասխանողը ներկայացրել է Դիմողի շահերը:

Թիվ ԿԴ-3/0586/02/14 գործով ըստ հայցի Հրաչյա Հովսեփյանի ընդդեմ Վարուժան, Նունուֆար, Սոնա, Հռիփսիմե Նավասարդյանների և Մարիամ Հարությունյանի՝ ավտոտնակի առուվաճառքի պայմանագիրը վավեր ճանաչելու պահանջի մասին, և ըստ հակընդդեմ հայցի Մարիամ Հարությունյանի, Սոնա, Հռիփսիմե և Մանուկ Նավասարդյանների ընդդեմ Հրաչյա Հովսեփյանի՝ ավտոտնակից վտարելու պահանջի մասին, ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշումը կայացվել է 25.06.2015 թվականին, օրինական ուժի մեջ է մտել 10.07.2015 թվականին:

Թիվ ԿԴ-3/0704/02/15 գործով ըստ հայցի Հրաչյա Հովսեփյանի ընդդեմ Վարուժան, Նունուֆար, Սոնա, Հռիփսիմե Նավասարդյանների, Մարիամ Հարությունյանի, երրորդ անձ՝ Զովունիի գյուղապետարանի՝ ինքնական կառույցները քանդել պարտավորեցնելու պահանջի մասին, ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշումը կայացվել է 27.01.2016 թվականին, օրինական ուժի մեջ է մտել 29.02.2016 թվականին:

*Նշված փաստերը հաստատվում են դիմումով, Պատասխանողի բացատրությամբ, «Դատալեքս» դատական տեղեկատվական համակարգից կատարված քաղվածքով:*

2. Հրաչյա Հովսեփյանը փաստաբան Վահագն Դանիելյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ դիմումը Պալատ է ներկայացրել 2019թ. ապրիլի 19-ին:

*Նշված փաստը հաստատվում է գործում առկա Դիմողի կողմից ներկայացված դիմումով:*

#### **6. Պատասխանողի անձր բնութագրող հանգամանքները.**

Պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի կողմից տրամադրված տեղեկանքի համաձայն Վահագն Դանիելյանը փաստաբան է հանդիսանում 15.04.2002 թվականից: Վահագն Դանիելյանի նկատմամբ 2013-2019թթ ժամանակահատվածում հարուցվել է 7 կարգապահական վարույթ:

Պալատի խորհրդի 03.03.2016թ. թիվ ԿԳ/51-Ա և 06.10.2016թ. թիվ ԿԳ/115-Ա որոշումներով փաստաբան Վահագն Դանիելյանը ենթարկվել է կարգապահական պատասխանատվության՝ անդամավճար վճարելու պարտականությունը չկատարելու համար: Վերջինիս նկատմամբ կիրառվել է կարգապահական տույժ՝ համապատասխանաբար նկատողություն և խիստ նկատողություն, որոնք մարված են:

Պալատի խորհրդի 15.12.2016թ. թիվ ԿԳ/194-Ա որոշմամբ Կանոնագրքի 2.7.2, 3.1.8, 3.5.5 և 3.6.1 ենթակետերի խախտման համար փաստաբան Վահագն Դանիելյանը ենթարկվել է կարգապահական պատասխանատվության: Վերջինիս նկատմամբ կիրառվել է կարգապահական տույժ տուգանք՝ 100.000 (մեկ հարյուր հազար) ՀՀ դրամի չափով և լրացուցիչ կարգապահական տույժ՝ «Դեռնթոլոգիա» թեմայով լրացուցիչ վերապատրաստման դասընթացի մասնակցություն՝ 8 ակադեմիական ժամ ժամաքանակով: Լրացուցիչ տույժը չի մարվել:

Պալատի խորհրդի 13.07.2017թ. թիվ ԿԳ/75-Ա որոշմամբ Կանոնագրքի 2.7.2, 3.1.8, 3.5.5 և 3.6.1 ենթակետերի խախտման հատկանիշներով հարուցված կարգապահական վարույթը կարճվել է:

Պալատի խորհրդի 20.02.2018թ. թիվ ԿԳ/20-Ա որոշմամբ Կանոնագրքի 2.7.2, 3.5.5 և 3.6.1 ենթակետերի խախտման համար փաստաբան Վահագն Դանիելյանը ենթարկվել է կարգապահական պատասխանատվության: Վերջինիս նկատմամբ կիրառվել է կարգապահական տույժ՝ խիստ նկատողություն և լրացուցիչ կարգապահական տույժ՝ «Դեռնթոլոգիա» թեմայով լրացուցիչ վերապատրաստման դասընթացի մասնակցություն՝ 8 ակադեմիական ժամ ժամաքանակով: Լրացուցիչ տույժը չի մարվել:

Պալատի խորհրդի 07.07.2018թ. թիվ ԿԳ/109 որոշմամբ վերապատրաստման դասընթացներին մասնակցելու պարտականությունը չկատարելու հիմքով հարուցված կարգապահական վարույթը կարճվել է, իսկ 11.08.2018թ. թիվ ԿԳ/174 որոշմամբ անդամավճար վճարելու պարտականությունը չկատարելու հիմքով ենթարկվել է պատասխանատվության՝ նկատողության ձևով: Տույժը մարվել է:

#### **7. Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.**

*Պալատի խորհուրդը գտնում է, որ փաստաբան Վահագն Դանիելյանի նկատմամբ Օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի, ինչպես նաև Կանոնագրքի 3.1.10*

ենթակետի պահանջների խախտում թույլ տալու հիմքով հարուցված կարգապահական վարույթը պետք է կարճել հետևյալ պատճառաբանությամբ.

**Օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝** փաստաբանը ենթակա է կարգապահական պատասխանատվության սույն օրենքի և փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջները խախտելու համար:

**Օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝** փաստաբանը պարտավոր է պահպանել սույն օրենքի, փաստաբանի վարքագծի կանոնագրքի և փաստաբանների պալատի կանոնադրության պահանջները:

**Կանոնագրքի 3.1.10. ենթակետի համաձայն՝** փաստաբանն իր մասնագիտական պարտավորությունների բարեխիղճ և որակյալ կատարումից բացի, այլ երաշխավորություն չի կարող տալ, մասնավորապես չի կարող երաշխավորել հանձնարարության կատարման արդյունքը՝ անկախ արդյունքի կանխատեսելիությունից, երբ այդ արդյունքը կախված է դատավորի կամ վարույթն իրականացնող մարմնի որոշումից: **Փաստաբանի կողմից քաղաքացիական, քրեական կամ վարչական գործով վստահորդի օգտին դատական ակտի կայացման խոստում տալը, ինչպես նաև քրեական գործով վարույթն իրականացնող մարմնի կողմից վստահորդի օգտին վերջնական որոշում կայացման խոստում տալը, հանդիսանում է ակնհայտ կոպիտ կարգապահական խախտում:**

**Օրենքի 39.3 հոդվածի 3-րդ մասի համաձայն՝** փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթը կարող է հարուցվել կարգապահական պատասխանատվության հիմքը հայտնաբերելուց հետո՝ վեցամսյա ժամկետում, բայց ոչ ուշ, քան հիմքը ծագելուց մեկ տարի հետո: Սույն մասում նշված ժամկետներն անցնելուց հետո կարգապահական վարույթ չի կարող հարուցվել, իսկ խախտմամբ հարուցված վարույթը ենթակա է կարճման: Կարգապահական վարույթ հարուցվելու օրվանից սույն մասով նախատեսված վաղեմության ժամկետը կասեցվում է:

Նշված իրավական նորմով նախատեսված է փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու և պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետը: Դա այն ժամանակահատվածն է, որի ընթացքում փաստաբանի վստահորդը կամ այլ իրավասու անձ կարող է Օրենքի կամ Կանոնագրքի պահանջների խախտման հիմքով ներկայացնել հաղորդում փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու համար:

Նշված ժամկետն անցնելը (այդ ժամկետի ընթացքում կարգապահական վարույթ հարուցելու հաղորդում (դիմում) չներկայացնելը) շահագրգիռ անձի համար առաջ է բերում անբարենպաստ իրավական հետևանքներ, այն առումով, որ նույնիսկ կարգապահական պատասխանատվության հիմքի առկայության (փաստաբանին վերագրվող արարքը հաստատվելու) պարագայում Օրենքի իմպերատիվ պահանջից ելնելով փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցվել չի կարող, իսկ այն հարուցման դեպքում ենթակա է կարճման:

Օրենքի 39.8-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ ենթակետի համաձայն՝ *փաստաբանների պալատի խորհուրդը կարճում է փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ վարույթն այն դեպքում՝ երբ անցել են սույն օրենքով նախատեսված վաղեմության ժամկետները:*

Կարգապահական գործի նյութերում առկա տվյալներից բխում է, որ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանում քննվող թիվ

ԿԴՅ/0586/02/14 և ԿԴՅ/0704/02/15 քաղաքացիական գործերի շրջանակներում Պատասխանողը ներկայացրել է Դիմողի շահերը:

Ընդ որում, թիվ ԿԴՅ/0586/02/14 գործով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշումը կայացվել է 25.06.2015 թվականին, օրինական ուժի մեջ է մտել 10.07.2015 թվականին, իսկ թիվ ԿԴՅ/0704/02/15 գործով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշումը կայացվել է 27.01.2016 թվականին և օրինական ուժի մեջ է մտել 29.02.2016 թվականին:

Տվյալ դեպքում փաստաբանին վերագրվող ենթադրյալ խախտումը (վստահորդի օգտին դատական ակտի կայացման խոստում տալը) կարող էր կատարված լինել նշված գործերի քննության ընթացքում, այսինքն՝ համապատասխանաբար մինչև 10.07.2015 թվականը և 29.02.2016 թվականը (դատարանի որոշումներն օրինական ուժի մեջ մտնելը):

Նման պայմաններում, եթե Դիմողը գտնում էր, որ հիշյալ քաղաքացիական գործերով իրավաբանական օգնություն տրամադրելու ընթացքում փաստաբանի կողմից թույլ են տրվել խախտումներ, ապա նա կարող էր ամենաուշը համապատասխանաբար 10.07.2015 թվականից կամ 29.02.2016 թվականից սկսած օրենքով սահմանված ժամկետում ձեռնամուխ լինել իր իրավունքների պաշտպանությանը, ինչը չի արել:

Փոխարենը, փաստաբան Վահագն Դանիելյանի կողմից թույլ տրված ենթադրյալ խախտման մասին Պալատին հայտնել է 2019 թվականի ապրիլի 19-ին, այսինքն՝ կարգապահական պատասխանատվության առերևույթ հիմքը ծագելուց (փաստաբանի կողմից Օրենքի կամ Կանոնագրքի առերևույթ խախտում թույլ տալուց) ավելի քան երեք տարի անց:

Վերոգրյալի հաշվառմամբ Պալատն արձանագրում է, որ Դիմողի կողմից նշած հիմքով փաստաբան Վահագն Դանիելյանի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը ենթակա է կարճման՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ դիմումը ներկայացնելու պահին անցել է փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու համար Օրենքով սահմանված վաղեմության ժամկետը, այն է՝ կարգապահական պատասխանատվության հիմքը հայտնաբերելուց հետո՝ վեցամսյա ժամկետը, ինչպես նաև կարգապահական պատասխանատվության հիմքը ծագելուց (փաստաբանի կողմից առերևույթ խախտում կատարելուց) հետո՝ մեկ տարվա ժամկետը:

Միաժամանակ, Պալատն արձանագրում է նաև, որ վերոգրյալ հիմնավորումներով փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթը կարճման ենթակա լինելու պայմաններում Դիմումում նշված արարքների գնահատմանը Խորհուրդն անդրադարձ չի կատարում:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասի 14-րդ կետի, 39.7. հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետով, 39.8. հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, Փաստաբանների պալատի կանոնադրության 16.26-րդ կետի պահանջներով՝ Պալատի խորհուրդը

## **Ո Ր Ո Շ Ե Ց '**

**1. ՀՀ փաստաբանների պալատի նախագահի կողմից 20.05.2019**

**թվականի թիվ 170-Ա/ԿԳ-19079 որոշմամբ փաստաբան Վահագն Դանիելյանի (արտոնագիր թիվ 425) նկատմամբ Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 3.1.10 ենթակետի պահանջների խախտում թույլ տալու հիմքով հարուցված կարգապահական վարույթը կարճել:**

**2. Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել կողմերին:**

**Ծանոթություն.** *Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում սույն կետով նախատեսված բողոքարկման ժամկետն անցնելուց հետո:*

ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի  
կարգապահական գործով  
նիստը նախագահող՝

Հրանտ Անանյան

**24 դեկտեմբերի, 2019թ.  
թիվ ԿԳ/209-Ա  
ք. Երևան**